ի բազկացն գրկեսցուք և սուլթանքն և բամբիշք պա-
ռնացն ամաչէին յերեան նորա հայիլ, այսօր գահիճ
մի տրմարդի և անօրէն, օտար և արեանարբու՝ ըմ-
բռնեալ զնա և ի բազկացն կախեալ և Ի տակ եղեալ
ի կախաղանին։ Եւ որ զգլուխն օծանէր և զմարմինն
փափկացուցանէր անուշ իւղովք և զարմանալի ծխա-
նելեօք, այսօր ի վերայ ծառին արևակէզ ի տուէ եւ
ցրտասառոյց ի գիշերի, քանզի ամիս էր Մարտի։ Եւ
այն որ ձեռն առեալ զգրիչն եւ գրէր[1]) զհրամանս
թագաւորին եւ զմանսուպն ում կամէր տար եւ գրէր
խէթտիշէրիֆ և խափանէր զհրամանս թագաւորին թէ
Այսպէս լիցի, այսօր մի ձեռն ի կախ և մի ձեռն ի վե-
րայ երեսին եղեալ։ Ա՜յ և ո՜հ, սարջիմ ասելն և զըզ-
ուիմ զծըրելն զփառս և զմեծութիւնս սորա[2]), քանզի
սայ էր թագաւորն. ի ժամանակ մեծ վալիտէին քեխեա
եղեալ եւ յետ ժամանակի ինչ զսա տվեալ բազում
գանձիւք ումեմն որոյ անունն Շապան զալֆա ասի,
վասն այնորիկ մտանէր և ելանէր ի պալատն արքունի
համարձակապէս։ Եւ յետ մի տարոյ կամ երկուսի ան-
ցելոյ, սայ եղև ընդ փոքր վալիտէին միախորհուրդ
և դարան գործեալ մեծ վալիտէին՝ մօր Մուրատին և
Իպրահիմին և Օսմանին, զնա սպանել ետուն պատ-
ճառաւ ինչ, և մայր թագաւորիս փոքր վալիտէն ի
ժամանակի մեծ վալիտէին ըստացաւ անուն մեծ բա-
ռութեան թէ Կարգացող է և տանէն ի դուրս ոչ է ե-
լանող, և այս էր ստոյգ[3]). բայց խորհուրդ ունէր և
ահ ունէր ի սկեսրէն իւրմէ, մինչեւ մի եղեալ հետ
Մուլքիին և զնա սպանին։ Եւ յետ այնորիկ բազում
ոճիրս գործէին ծածկաբար երկոքինս, քանզի ի տե-
ղիս տեղիս բաղանիս չինել և այլ զարդ փառաց կայր
յառաջմանէ եւ ինքեանք[4]) նոր իմն զարդք եւ չէնք

1) եւ գրէր եւ գրէր. 2) սոցա. 3) ըստուգ. 4) ինքն.